

ԲԱԺԱՆՈՐԿԱԿՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար սարեկան 10 ֆրակ. վեճակահանայ 5 ֆրակ. Արսասանանի համար սարեկան 12 ֆրակ. վեճակահանայ 6 ֆր.

ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Կրոնքիւնք եւ յին տրուիր:

Ծանուցիւն տողը 20 սանրիւ հ:

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ՇԱՐՇՈՒՄ

Նախկին և զորս զրկել / վրայդուրեւան հասցիին .

Редакция на Вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Գին 10 ՍԱՆԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԷՂՐԱՅԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԵՐԵՆՆԵՐԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՈՐԵՐԸ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



Այսօրու ընէ կսկսինք հրատարակել «Շարժում» ի խաչարթաթերթը: Այս ձեռնարկ նպատակ ունի օգտակար ըլլալ արասանմանի հայութեան և մասնաւորապէս Պուշկարիոյ ու Ռուսանիոյ հայ գաղութներուն, որոնց համար բազմակողմանի և անաչառ թերթի մը պէտքն այնքան զգալի եղած է: Թրքական թոյլ ու քծնող բարբրու հինգարեայ լուծը մեր տոհմային ինքնուրոյն նկարագրին կարեւոր հարձակումը տուած ըլլալով, հարկ է նշանակել սթափինք և գաղտնիք ինքնաճանաչութեան փրկաւէտ գաղափարին. որուն անկարելի է հասնիլ առանց խիստ, անշահախնդիր ու քննադատող մասնուի: Եւ ճիշդ բարեշրջումի ու վերակենդանութեան այս ծանր գործին կողմէ զարկ տալ «Շարժում» իր ճիգերն ալ միացնելով արտասահմանի հայ մամուլին կարեւոր տարբերուն, որչափ որ ներքին իր կարողութիւնն ու միջոցները:

Իրենց առաջագրած նպատակին համեմատ համար, թերթիս հիմնադիրները «Շարժում» ի բացարձակ անկախութիւնը վճռած են: Արտաքին ոչ մէկ տեսակ ազդեցութիւն, անհատական թէ կուսակցական, երբեք չպիտի կրնայ զինքը շեղեցնել իր ուղղութիւնէն, որ պիտի ըլլայ՝ արձագանգ հանդիսանալ ճշունած ժողովրդեան գոռ ու արդարացի ազազակին ընդդէմ բռնութեան, աշակցել հայ ազգի ազատագրութեան գործին թէ՛ նախապաշարման ու հնամուլութեան կապանքներէն և թէ՛ դարաւոր թշնամիին շղթաներէն, ներշնչել առաջընթացական սկզբունքներ, մատնանիչ ընել ինչ որ փոստաբեր է հանրութեան, առանց երբեք խրատելու այս ընթացքէն առաջ գալիք ու է նիւթական փրօսէ, սախորին համոզումով թէ ժողովրդեան վերածնունդին իսկապէս ծառայելու ուղղ մամուլը միայն այս շաւղէն ընթանալու է: Առտի

«Շարժում» անխնայ պիտի հարուածէ բոլոր այն կեղծիքները, նենգութիւնները, կործանարար սնափառութիւնները և մեր ընկերային կեանքին բարոյական ախտերը, որոնք այսօր մեր ինքնազգին ամէնէն բարդ խտերուն մէջ բոյն գրած՝ միքրոպային անյագութեամբ կը կրծեն ու կը քանդեն:

Ձանք չպիտի խնայուի թերթին պարունակութիւնը շահեկան ու սնուցիչ ընծայելու. քննադատական, գրական, բանասիրական գրութիւններ՝ պատշաճ չեղումով և յստակ աշխարհաբայով խմբագրուած՝ յօժարաբար պիտի հիւրընկալուին թերթին է՛րուն մէջ. իսկ բացարձակապէս պիտի մերժուին անձնական, կուսակցական ազարդիւն ու սնամէջ վէճեր յարուցանող յօդուածներ: Եւ հայ նորահաս երիտասարդութիւնը որ սկսած է առաջընթացական գաղափարներով սոգորուիլ՝ մշտնջող ժամանակիս հոսանքէն, և որուն աշակցութեան վրայ կը գնենք մեր յոյսը, իր իր ճիգերն ու ձգտումներն համապատասխանող օւկան մը պիտի գտնէ «Շարժում» ի մէջ:

Իրբեւ Պուշկարիա հրատարակուող թերթ, լայն տեղ մը պիտի յառկացուի երկրին հայ գաղութականութեան ազգային, ընկերային ու ընտանեկան կեանքը շօշափող խնդիրներու համար, չմոռցուելով մի անգամայն տիրող տարրը և անտեսական այն պայմանները որոնք կրնան ի հարկին թեւազրկել ըլլալ ձեռնբէց հայուն՝ իր նիւթական վիճակին բարգաւաճմանը:


Բացի ազգային կեանքի իրերէն, պիտի հարգուին նաեւ, հակիրճ ու ամփոփ, արտաքին բոլոր շահագրգիռ դէպքերը թէ՛ քաղաքական թէ՛ մտաւորական աշխարհին պատկանող: Խմբագրութիւնս արդէն իսկ սկսած է ամէն հայաշատ կեդրոններու մէջ, արտասահման թէ՛ Ռուսիա, թէ՛ ընթացիկներ գտնելու հետամտիլ, որոնք ազգային կեանքի մասին ճշգրիտ տեղեկութիւններ հազարգեն «Շարժում» ի ընթերցող

ներուն: Ասկէց զատ կարգ մը ծանօթ գրիչներու յարասու աշխրատակցութիւնը արդէն իսկ ապահովուած է:

Թէեւ սկզբունքով համաձայն չենք թրքերէն լեզուն գործածել հայ թերթի մէջ, նկատելով սակայն որ բնիկ պուշկարահայութեան մէկ մեծ մասը այդ բարբրու կը հասկնայ, ակամայ ստիպուած ենք գտնէ մեր Գրքերսին 3—4 սիւնակներն յստակացնել թրքերէն լեզուով լուրերու՝ ամէնապարզ խմբագրութեամբ և յաճախ գործածելով հայերէն բառեր, առանց խրատելու ասկից առաջ գալիք լեզուական խորթութիւնէն:

ԳՄՄԵՐ ԱՐՇԱԻՐ ՇՄՆԱՐԸ (Ի.)

ԳՐԱՆ ՆՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ



Քայանի է թէ Գուռը որքան փութկիտ է խոստում տալու, և զանդա՛ կը կարգը զանոնք գործագրելու գայ:

Այս անգամ ալ հինգի չափ նոր խոստումներ կողմէն բարգաւաճու առաջիններուն վրայ, ինչպէս անցեալները հեռագիրը կը ծանուցանէր, և սակայն նոյն իսկ եթէ ի ակնհայտ, հիմնապէս զուրկ են կարեւորութիւնէ:

Գաղթականներուն արտօնութիւն պիտի տրուի եղբ հայրենիք վերագառնալու: Եւ ի՞նչ իրաւամբ կ'արգիլէին որ այս կողպատած և ջարդուած ամբարը որ յեղափոխական տարրին մէկ հիւլէն անգամ չի պարունակեր, ի՞նչ լրատուք, կրօնք, այս կիները, երախտները և ծերունիները կ'արգիլուէին իրենց աւերակ տունները գառնալու: Արիւնայից օրերու յիշատակը դեռ այնքան թարմ էր իրենց համար. յանցաւոր են եթէ պայմանաւորաբար չլրացած չէին համարձակած հեւեկու առաջին վերագառնողներուն, որոնց զբոստած կողմէն ընդունելութիւնն ալ հեռի էր քաջալիրիչ ըլլալէ:

Ահա այս եղկելիները ընդուն

ներու խոստումն է որ կըսուի թէ պիտի տրուի իբրև բարձ ազոյն շնորհք մը. շնորհակալութիւն:

Նաև արտօնութիւն պիտի տրուի եղբ հայրենի մէկ: Եւ զէն միւսը փոխադրուելու. այս անհատական ազատութեան, այս կոշտ արգելքին բարձումը գիւրութիւն պիտի ըլլայ մեր գաւառացի եղբայրներուն զարձակ լեցնելու մեծ քաղաքները, իրենց գրաստական կեանքը վերսկսելու և դրամ հասցնելու վաշխառուին և կառավարութեան:

Գաղթ վիճակներու տուրքերու առժամեայ բարձման, դժուար չէ անոր ոգիին թափանցել. այդ որոշումը կը բխի անկի հարկէ քան բարեացակամութիւն: Արդարեւ հայ գիւղացին թշուառութեան այն կէտին յանգած է որ թուրք հարկահաւարն ալ կը յուսահատեցնէ, ուստի թուրքը այս տուրքի խնդրին մէջ վեհանձնութիւն ծախած կըլլայ հոն՝ ուր կորսնցնելիք բան մը չունի:

Գաղթ ցանցաւուններուն, անոնց ալ վերջին լուսան կողպատելու համար կարծենք թէ զինուորական տուրքի պատրուակը աւելորդ է, երբ ամէն թուրք, ամէն քիւրտ իր մասնաւոր օրէնքներով հայը կողպատելու սանձարձակ ազատութիւն կը վայելէ:

Թուրքը կը սխալի. եթէ կը կարծէ թէ այս տեսակ սնտոի զեղերով կրնայ հայոց ցաւերը ամբար և մեղմացնել այն գեղազանցապէս զրգուած վիճակը որուն մէջ կապրի այսքան ատեն ի վեր: Մինչև ե՛րբ Թուրքիան պիտի շարունակէ իր այդ ծախող քաղաքականութիւնը, որ զինքը զրկեց իր ամէնէն կարեւոր տարրին աշակցութեան և երկիրը մոխրի վրայ նստեցուց: Գեւ չի հասկցա՞ւ որ եթէ հայը այդքան հաւաճանքեւոր անդրդուելի մնաց իր արդար պահանջումներուն մէջ, սուկէց ետքը, ա՛լ ժայռացած, ցանկոտ, կատաղի, բնաւ չը պիտի գաղթի կուռիէ, մինչև որ իրական արամագրութիւն մը

ս եննէ թուրքին վրայ իր վիճակը բարուքելու, մինչև որ վերջապէս լաւ օրէնքներ չտրուին իրեն, որոնք մեռեալ տառ չէ մնան և որոնց պաշտպանութեան տակ անկաշկանդ զարգանայ ու իբրև ազատ մարդ ապրի:

Ի՞նչ լայն խրամ ասոնց՝ և վերադարձի թողալու թեան մը և կամ պատրիարքական գործառնութիւններն հրատարակելու արտօնութեան միջև:

ԳԱՄԵՐ ԱՐՇԱԿԻՐ

ՏԻՈՒՐ ԵՒԵՒՈՅԹՆԵՐ

Որ եւ է ժողովրդի մտաւոր զարգացման, բարոյական պահանջները եւ իդէալական ձգտումները վրայ գաղափար կազմելու համար գլխաւորապէս հարկաւոր է ուսումնասիրել այդ ժողովրդի գրականութիւնը, գործերը սխալմբ եւ ընտանիքի կազմութիւնը՝ իր անգամները փոխադարձ յարաբերութիւններով: Ուրովհետեւ գրականութիւնը, զարոյց եւ ընտանիք միասին կազմում են այն հայելին, որի մէջ ամբողջ ժողովուրդը երևում է իր ներքին եւ արտաքին պատկերով:

Նախ խօսենք գրականութեան կամ մամուլի մասին:

Ուսումնասիրելով մամուլը, մենք կարող ենք հասկանալ ժողովրդի մտքի խելքը, ոգու բարձրութեան աստիճանը եւ հասարակական իդէալները:

Ուրեմն անկեղծ մամուլի առաջին եւ միակ պայտապանութիւնն է անկեղծութեամբ ցոյց տալ ժողովրդի մտաւոր եւ բարոյական կեանքը իր լաւ եւ վատ կողմերով, մասնանիչ անել այն վսեմ իդէալները որոնց պէտք է ձգտի ամէն մի ազգ իր պատմական դերը կատարելու համար ընդհանուր մարդկութեան մէջ, վերջապէս անվախ կերպով հարածել ժողովրդի յոռի կողմերը, որոնք արգելք են հանդիսանում հասնելու իդէալական մտաւոր եւ բարոյական բարձր աստիճանին: Կարծեմ պարզ է որ այդպիսի մամուլ ունենալու համար հարկաւոր են բազմակողմանի զարգացած, ժողովրդական կեանքի կարեւոր եւ նուրբ վայրկեանները ըմբռնող, թարմ խելքի ու սրտի տէր, մարդկային վսեմ իդէալները պաշտող, անկեղծ եւ անվախ հրապարակախօս գրագէտներ:

Հիմա խօսքերս մասնաւորինք եւ խօսենք արտասահմանի հայ մամուլի մասին, որը պէտք է առաջնորդ լինի այս ու այն անկեղծ ցրված հայ գաղթականութեան:

Ընթերցողին յայտնի է որ արտասահմանում հայ թերթերը բուսնում են սուսկի պէս: Այսօր Եւրոպայում, Ամերիկայում, Աֆրիկայում, թերեւս եւ Աւստրալիայում հրատարակվում են շատ հայ թերթեր: Գուցէ եւրոպական ոչ մի փոքր ազգ մեզ չափ թերթ չունենայ: Եթէ օտարները իմանան մեր թերթերի թիւը եւ նրանց խորհրդաւոր անունները, որոնք մեծ մասամբ եւ կազմում են թերթի ամբողջ բովանդակութիւնը, կապշեն եւ կը բացականչեն:

Վա՛հ, որչափ լուսաւորված են այս ստրուկ ասիացի հայերը:

Իսկ մենք հայերս ի՞նչ կարող ենք ասել. դժբախտաբար պէտք է խոստովանենք որ այդ թերթերից շատերը

ուղղութիւն չունեն. սակայն ունեն նպատակ—հա՛ց, հա՛ց, հա՛ց եւ ն'ս, ն'ս, ն'ս...

Ի՞նչ է այդ թերթերից շատերի բովանդակութիւնը. լուստանք, մուր, ցիխ, եզվիտական դարձվածներ եւ հնացած ու սառած ուղեղի դառանցանքներ...

Եւ ցաւալին է այն է որ այդ բոլոր արտայայտվում է ազգասիրական դիմակի տակ, եզվիտական քրմային պատգամի ձեւով եւ լիտի անկեղծութեան շեշտով:

Եւ շատ բնական է, որովհետեւ այդ խմբագրական լէզոնը կազմողներից շատերը կամ ձեզլիտների սաներից են կամ միջնադարեան պատեւելիներից եւ կամ գինեհտան հերոսներից...

Ահա սրանք են որ այսօր իրանց իսկական արհեստը թողած, օգտվելով ազգային խառն եւ տարտամ վիճակից, իրանց խելքից շատ ու շատ բարձր հարցեր վճռում են գրչի մի հարածով, որի բուն ողջ ձեւը նոյն իսկ ողբ բաժա՛ր չէ կարող ուղիղ բռնել:

Այո, գրում են եւ մրտում ամէն մի նւիրական զգացմունք եւ ամէն մի սուրբ գործ:

Սակայն ո՞վ է մեղաւոր որ այդ գառնազգեստ գայլերը ազատ համարձակ մտնում են միամիտ ու անկախ հայ ամբոխի մէջ եւ կարողանում են խաբերայութեամբ կողքի նրա արիւն քրտնքով աշխատած սանտիմները միայն մրի, ժանգոտած գրչի, հացի դե օղիի համար... Մեղաւորը հայ երիտասարդութիւնն է: Եւ խկապէս ցաւալի է որ արտասահմանի հայ երիտասարդութիւնը կարողանում է լոկ անտարբեր հանդիսատես մնալ այսպիսի ախուր երեւոյթների առաջ: Հայրենիքում ապրող ազնիւ հայ երիտասարդը կովում է բռնութեան դէմ, այստեղի երիտասարդը պէտք է կուէ այն արարածների դէմ որոնք աղոտոտում են հայի ամենանուիրական զգացմունքը եւ սղորուկի պէս ծծում ժողովրդի արիւնը:

Հայաստանում գէնք, այստեղ անկեղծ խօսք եւ սուր գրիչ հայ ցեցերի դէմ:

ՎԱՐԴՈ

ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԻՆ

Երեկ յեռ կանգուն զանոյճիդ վրայ, Աւ, ողբ հայրենիքի պաշտելի եր, Աւերոյր անհուն կեդգր ովսանեա, Արձանիդ սուրիս կեցած ծնրայիր:

Բայց ի՞նչ մեկեկ հիւսիսը պոստ, Գեգ պարտեղիցի անպեւ մուր, Աւեւ, Խոջ արհախրի մէք քաւաչդոր, Աւերոյր մոռցաւ ազնիւն ու վսեմ:

Ու քաւեր եկան ուժգին ու քեքեւ, Քու վեկ պասկերիդ ուղղուած շիւսակ, Եւ ցեխի աղոտ շիւսեւո անրեւ, Կարձեցիս քաղեչ քու սուրբ յիշատակ:

Սակայն չուշանար կը ծագի լնո օր, Ուր մուր անպեւ կը ցնդիս իսպառ, Եւ ուշի եկած անրոյր մոյր, Նորեկ կը կանգնե քեգ սուրբ, վեհափառ:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

1898 Յունվար 30

ՄԵՐ ԹՈՒՅ

Մտի՛ր մեր ազգային ամէնէն խոնարհ շրջանակներուն մէջ, արագ աչք մը պտուտցուր շուրջ ու տարօրինակ յուզման մը պիտի հանդիպիս որ կը տիրէ հոն: Կործուէութեան մէջ մեծ երեւնալ մեծը, անհնարինը ընկու տենդոս ջանքերով: Մենք այնպէս կըմբռնենք թէ ընդհանուր ազգին համակրութիւնը մէկ հարուածով վաստակելու համար աւելորդ առաքինութիւն մըն է համեստ, լուռ ու մունջ, մեթոտաւոր գործունէութիւնը, զոր հարկ է անպատճառ շրջապատել շնորհալից, աչք խաղտեցնող հանգամանքներով: Օչ թէ գործելու այս եղանակ գոնէ յարատեւութեան գործով արդարանար. առաջին թափով սրբնթաց սաւառնող թուշուրի մը պէս, որուն սլացքը կըթալով կը դանդաղի թեւերու սպառիչ յոգնութեամբ մը, մեր ազգին հանրային գործերուն զեկը վարելու կոչուողները, իրենց առաջին յարձակման մէջ զրդալից, շատ շանցած կը դանդաղին, կուտապտին ու անզգալաբար ամայութիւն մը կը տեսնես յանկարծ հոն ուր այնքան մեղուային ժրութիւն մը կը տիրէր:

Դպրոցի, եկեղեցիի, թաղի, բարեգործական, կրթական եւ առաջգիմական մարմիններու շուրջ շատ անասնէ այս տեսակ շտապող, անհամբեր ախտաւորներ, որոնք առաջին վայրկեանին անվեհեր, յանդուգն պոռոտախօսներ, չուտով ցոյց տուին իրենց ծիծաղելի անկարութիւնը, զոր չխափնեցան իսկ սքողելու:

Հեզի կուտանք որ կըր ժողովուրդը իր ընտրողական շրջուցիչ ձայնով մեզ սանի նստեցնէ ազգային ո եւ է պատասխանատու գործի վրայ, անմիջապէս, առանց վայրկեան մը կորսնցնելու, ցոյց տանք թէ ժողովուրդը չէր խաբուած իր ընտրութեանը մէջ. ու կ'զինք շարժովիլ, թալթիլ, հոս հոն վազել, պոտալ, հրամայել, անարգել, արհամարհանք նետել ալ եւ անեակ, անտանելի վետութեամբ մը փրացած, ազգը բարեբարելու ու զայն վերկենդանացնելու մարմաջով մըրկուած, բնաւ չզգալով այն տխուր հակազգեցութիւնը որ առաջ պիտի գայ անվրէպ կանխահաս յոգնութենէ, ձանձրոյթէ:

Գնա՛ ուր որ կուգես, Պոլսէն Փարիզ, Փարիզէն Ամերիկա ու դառնալով կանգ առ Պուլկարիա, այսպէս են մեծագոյն մասը մեր ազգային գործունէութեան հերոսներուն: Մարդ մը որ իր անհատական շրջանակին մէջ միշտ երեւցած է համեմատապէս համեստ, շրջանայաց ու բարեբեկ, յանկարծ առեւձ կը կտրի երբ իր ձեռքը տաս գործելու իշխանութիւն մը, ազգին բախար մասամբ տրամադրելու հեղինակութիւն մը: Դիմէ ազգային նորընտիր գործիչի մը ու հարցափորձէ զինք իր մտադրած ծառայութեան մասին. ձեռքի լայն շարժումներով, հեւքոտ շունչով, բոցավառ աչքով պիտի ներբողէ իր կերտած մէկ հրաշակերտ—ծրագրին յատկութիւնները. ու խօսքը պիտի վերջացնէ զլիս չափազանց նշանակելի օրօրումով մը, որ լուրեան կզգացունէ թէ քիչ օրէն թաղը, դպրոցը պիտի փրկուին իրենց անկեալ վիճակէն:

Աւելորդ է ըսել որ այս ծրագրին

մէկ տաւը, մէկ հիւշէն իսկ չիրականանար: Ի՞նչ թոնչ եւ ի՞նչ փուլուում: ՇԱՒԱՐՇ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՎԱՐԳ - ՊԱՏՐԻԿՈՎԻ

Արտաւաճման բնակող բարեկամ մը, որ Վարգ-Պատրիկովի դպրոցական ընկերը եղած է և անոր մտերմութիւնը վայելած, վերջերս մեզ կիմացնէ թէ իր մօտ ունի նշանաւոր հայ յիշափոխականին ինքնագիր յիշատակարանը և թէ րամագիր է մեզ զրկել զայն «Շարժում»ի մէջ հրատարակուելու համար:

Աւելորդ է յարել թէ խմբագրութիւնս որքան հրճուանքով փութաց հաւանիլ այս յիշատակարանի հրատարակութեան որ պիտի պարզէ ոչ միայն նշանաւոր և փոթորկալից կեանքի մը գերաշնացապէս շահագրգիռ պարագաները, այլ և թերեւ մինչև եւ հիմա մութի մէջ թաղուած շատ մը կէտեր պիտի լուսարանէ: «Շարժում»ի մօտաւորագոյն թիւերէն միոյն մէջ պիտի սկըսինք այս հրատարակութեան որ ապահով ենք թէ չարունակ հեւքո: և վառ հետաքրքրութեան մը ջերմութեանը մէջ պիտի պահէ մեր ընթերցողները:

ԶՕԼԱԻ ԴԱՏԸ

Յրանսական բանակի հրեայ նախկին հարիւրապետ Տրէյֆուսի խընդիրը հանրածանօթ է:

Կը յիշուի թէ 1894ին, զինուորական ատենի մէկ վճռովը, որ դեմիակ նիստի մը մէջ տրուած էր, իբր պետական դաւաճան ցկեանս բերդարգելութեան դատապարտուեցաւ, հրապարակային անարգանք եւ աստիճանաղրկութիւն կրելէ ետքը: Հանրային կարծիքը արդէն այդ խնդիրը մոռցած էր, բայց աքսորեալին ընտանիքը միշտ կը հակէր, կաշխատէր անկեղծութեամբ հրեայ դրամատէրներու խմբակի մը, որուն խելքը միտքը Տրէյֆուսի դատը վերաքննել տալ էր, զայն Սատանայի կղզիէն փախցընելու ձեռնարկները վիժելէն ի վեր: Եւ անա օրէն մէկը Քրանսական թերթ մը կը հրատարակէր նամակ մը որ Տրէյֆուսի անմեղութիւնը ջատագովելով բուն յանցաւորը գտնել կը պնդէր յանձին էսթէրհազի հրամանատարին:

Ինչ որ ուժ եւ կարեւորութիւն կուտար այս գրութեան, սա պարագան էր որ ծերակոյտի դեր նախագահ Շէօրէ Բէյթիլն կը ձայնակցէր անոր եւ բոլոր ուժովը կը պոռար թէ զօրաւոր փաստեր ունի էսթէրհազին դատապարտող: Արդարեւ ինչ ինչ հանգամանքներ, բաւական զօրեղ եւ թերեւս նոյն իսկ անվրէպելի, հաւաքուած էին հաստատելու որ Եթէ Տրէյֆուս արդար մը չէր, գոնէ էսթէրհազի եւս հեռի էր անմեղ մը ըլլալէ:

Մասնութեան նամակին տառերուն

բարորոշ նմանութիւնը էսթէրնագրի ձեռագրին հետ, անոր օտար ծագումը եւ մէկէ աւելի կասկածելի կողմերը, տեղի եւ ժամանակի յարմարութիւնները եւ մանաւանդ քանի մը յոյժ ֆրանսաստեղծ նամակներու գոյութիւնը բաւականէ աւելի էին էսթէրնագրի յանցաւորութիւնը վճռելու: Յուզումը անելի էր ֆրանսայի ամէն կէտերուն վրայ:

Եւ սակայն էսթէրնագրի հակառակ էր դէմ եղած փաստերուն, զինուորական ատենի յոնկիակ նստին մէջ անպարտ արձակուեցաւ, ինչպէս չորս տարի առաջ Տրէյֆուս դարձեալ դոնփակ վճռով դատապարտուած էր: Ահա այդ յուռն է ամէն իրարանցումի պատճառ եւ ֆրանսացիք չի պիտի հանդարտին մինչեւ որ զայն կոնակի վրայ չընան, զիտնալու համար թէ ինչ կայ ետին, որն է այն ճշմարտութիւնը որուն պապականը կը սպառնին:

Այս վայրկեանին է որ մեծ վիպասանը, Զօլան, բեմին վրայ կերեւայ, Տրէյֆուսը պաշտպանելու: Օտոռոյ մէջ երկու նամակներ հրատարակել կուտայ որոնք երկու շանթահարիչ ուսմբերու պէս տակն ու վրայ կ'ընեն ամբողջ երկիրը:

«Ձեր աստղը—կը գրէ Զօլա Ֆէլիքս Պօնի—Պ. նախագահ, որ ցարդ այնքան պայծառ կը յայլէր, խայտառակ կերպով մթնոլորտը վրայ է»:

Եւ նոյն կժուռ ոճով կամբաստանէ բոլոր այն բարձրաստիճան սպաները, ֆրանսական բանակին փառքերը, որոնք մասնակցած էին Տրէյֆուսի եւ էսթէրնագրի դատերուն: Կեղծող եւ խարբրայ կանուանէ զանոնք պարզապէս. Բօտի ար Վլամը կը նկատէ դատաւորութեան չար ողբն, Մէրսիէ, Պիլո, Գօտիֆր, Կոնս, Բէլիէ, Ռիվարի եւ այլն բոլորն ալ աւելի կամ նուազ խարբրանքի եւ մեղսակիցներ են:

Կերեւակայէք անշուշտ ֆրանսական ամբողջ ցասման սարսուռը. «կեցցէ՛ բանակը» պօռացին ամէնքը եւ յետոյ իսկոյն «անկեցի՛ն հրեայք»: Եւ Բարիզէ մեկնած այս վայրի գոչը բոցի պէս տարածուեցաւ գաւառներու մէջ եւ նոյնիսկ ծովէն անդին Ալժէ, ուր յայտնի է թէ Իսրայէլի ցեղը ինչ փոթորիկներ կրեց եւ զեռ կը կրէ:

«Անկեցի՛ Զօլա», գոչեցին ամէնքը եւ նոյն իսկ տաքզուռն ուսանողութիւնը:

Բայց մեծ հեղինակը չըւարեցաւ եւ ստենտորեան ձայնով պատասխանեց թէ պատրաստ է իր ըսածները հաստատել երգուեալներու առջեւ:

Դատը անբախտառեղի աղմուկ հանած է. երկու հարիւրի չափ անձեր, բոլորն ալ պետական նշանաւոր գիրքերու տէր, ընդ որս եւ Բաղիմիր Բէրիէ եւ հինգ հատ նախկին նախարարներ դատարան հրաւիրուած են վկայութիւն տալու:

Զօլանի կացութիւնը որքան փափուկ այնքան ալ հիանալի է. վասն զի ինք եւ Օտոռոյ խմբագիրը գրէին մինակ են եւ անվեհեր կուրծք կուտան ֆրանսայի ամբողջ ցասման եւ այս՝ արգարութեան եւ ճշմարտութեան սիրոյն համար:

Դատը սկսած է եւ կը շարունակուի: Անոր գլխաւոր պարագաները պիտի հաղորդենք հակիրճ կերպով:

ԿԵՂՇԱՊԱՐ

—)(—

Հանրածանօթ շրջաշէնի Տ.Ն.Ս.Տ. իւր արժէքը, որ տարիներ առաջ Պոլսոյ առեւտրական հրապարակին վրայ զանազան խարճութիւններու ու զեղծումներու հետեւանօք բանտարկուելէ եւ իւր-ըր աշխարհի նըշաւակուելէ յետոյ խոյս տուած էր մայրաքաղաքէն, այս անգամ երեւան ելած է Պոլսոյ հայ գաղթականութեան մէջ, ջանալով մտնել իր տակ ծածկել իր ամօթապարտ անցեալը ու կեղծաւորի զիմակին ներքեւ վերսկսել իր շահատակութեանցը:

Այս անգամ յիշեալ կեղծարարը իմանալով Շարժուելի հրատարակութիւնը եւ թափանցելով անոր ողբին որ ինքնին վտանգ մըն էր իր ու իր դատակարգի մարդոց գոյութեան գէժ, փութացած է անոր վարկը կոտրել հանրութեան առջեւ, հասած սեղն յայտարարելով թէ Շարժուել կուսակցական թերթ է: Կ'անգոսնե՛ք այս կարգի լպիբջ գաճաճներուն մուրիբը, եւ մենք մեր ուղղութեամբ անխոտոր կը զիմենք այն նպատակին սրուն կղձանք հասնիլ:

ԵՐԵՎԱՆ

—)(—

Կիմանանք թէ մօտերս գրական եւ երաժշտական ազգային երկիրք մը տեղի պիտի ունենայ Սայէտինէնի յէ սրահին մէջ:

Այս երկիրքին եղական կողմն այն է մանաւանդ որ մի միայն հայ երկսեռ արուեստներն են մասնակցութեամբ կը տրուի, ինչ որ օրորական բան մը չէ մեր մէջ:

Կը մայթենք որ կատարեալ յաջողութիւն գտնէ այս երկիրք, որ այնքան հետաքրքրութիւն կը շարժէ եւ այնքան հրապուրիչ ըլլալ կը խոստանայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—o—

Չնդկաստանի, Աւստրալիոյ եւ Խաղաղականի անգլիական նաւատորմերը հրաման ստացեր են խմբուելու Չինական ջրերըուն մէջ:

Այս ուժերը Անգլիան կարող պիտի ընեն տապալելու բոլոր այն դժուարութիւնները որոնց կը հանդիպի բրիտանական քաղաքականութիւնը Մայրագոյն Արեւելքի մէջ:

Միւս կողմէ կը ծանուցուի թէ իբր 70,000 Ռուս զինուորներ հաւաքուած են Վլատիվոսթօք եւ թէ այդ թիւ օրէ օր աւելնալով վրայ է: Չինուորական մեծ գործունէութիւն կը տիրէ: Նորանոր զօրախումբեր շարունակ Օտեսա կը հասնին իսկոյն նաւ մտնելու համար:

ՊՈՒԿԱՐ ՍՊԱՆԵՐԸ

Կ. Պոլսէն կը ծանուցանեն թէ Ռուսիոյ զեսպանատան զինուորական կցորդ Պ. Բէշքօվ, ան-

ցեալ օր Պոլսոյ արտաքին գործերու նախարարին հետ վարչատական Պոլսոյ սպաներու խնդիրը կարգադրելէ ետք Պոլսոյ դարձեր է:

ՍԹԱՆՊՈՒՂՈՎԻ ՍՊԱՆԻՉԸ

Ռուսական թերթերէ առնելով վերապահութեամբ կը հրատարակենք հետեւալը զոր ներքին գործերու նախարար Պ. Բէշքօվի հետադրեր է նաչի նահանգապետին:

«Սթամպուլի բուն սպանիչըն է Հալիա Սուլիա, 31 տարեկան, թխագէժ, միջահասակ, մոխրագոյն մազերով եւ լայն ու զարգացած կուրծքով. աջ ձեռքին եւ ուսերուն վրայ վէրքի սպիներ կը կրէ:

«Պէտք եղած խուղարկութիւնը կատարեցէք, զինքը երեւան հանելու համար, եւ ձեռք բերած արդիւնքնիդ հաղորդեցէք վուլթով նախարարութեան: Ղրկեցէք նաեւ բոլոր Պոլսոյ եւ Սերպ բնակիչներուն անունները ինչպէս նաեւ իրենց ի գործ դրած արհեստը»:

ԹԵՍԱԼՅԱ

Փետրուար 5 թուականով Կ. Պոլսէն կը ծանուցուի թէ դեսպանատանց առաջին թարգմանները պալատ գացեր են ստիպողական կերպով Թեսալիոյ պարպուիլը խնդրելու Սուլթանէն:

Առաջին քարտուղար Թահսին պէյ, պատասխանած է յանուն Սուլթանի թէ խնդիրը պիտի յանձնուի նախարարական խորհրդին:

Իրողութիւնը սա է որ շարք թէ մը ի վեր Անատոլիէն դէպ ի Թեսալիա զրկուելու վրայ են բազմաթիւ ըէտիֆներ, ամբողջացնելու համար այն 90 վաշտերը, որոնք զգալի կերպով նուաղած էին:

ՖԵՐՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆ

Վիեննայէ կը ծանուցուի թէ Բիւնարթիկն ալ Սաքս Բոպուրկ իշխանուհին թողաւապէ կը տառապի, որ սակայն երկուշաբթի հանգամանք չունի: Ֆէրտիւնտ իշխան Վիեննա ուղեւորած է իր հիւանդ մօրը քով:

ԵԳԻՊՏՈՍ

Գահիրէէ կը հաղորդեն փետր. 11 թուով թէ եգիպտոսի ազգային ժողովը բացուեալ է Խալիվին ձեռքով, որ իր կրօնական ճառին մէջ յայտարարած է թէ եգիպտական կառավարութիւնը սուրբերու զեղչման ծրագիր մը մատուցած է տէրութիւններուն՝ եւ կը յուսայ թէ անոնց հաւանութիւնը պիտի ստանայ:

Անգլիական լրագիրները բուռն յարձակումներ կ'ընեն Լորտ Սալլաքըրիի դահլճին դէմ, որովհետեւ Անգլիոյ նախարարացեալը ետ առեր է իր պահանջումը Բօրթ Արթուրի մօտ Թալիէնուանի միջազգային վաճառականութեան առջեւ բացուածին համար փոխան շինական փոխառութեան. մանաւանդ «Տէյլի Նիւզ», ծայրայեղ ազատական թերթը, անողորմ երգիծանքներով ողջունեց պահպանողական նախարարակալին այս ամօթալից պարտութիւնը Ռուս դիւանագիտութեան առջեւ: «Սթանսարա» եւ, որ օրուան դահլիճին բերանը կը համարուի, խիստ խմբագրականով մը կը հարցունէ լրտ Սալլաքըրիի թէ ինչպէս կը լլայ որ ետ կ'ընկրկի այդքան կարեւոր խնդրի մը մէջ՝ յուսախաբ ընելով հանրային կարծիքը:

Ազատականները խնդրութեան մէջ են. ճիշդ առիթը չէ՞ պարսաւանքի քուէ մը առաջարկելու եւ ժողով գումարելով որոշեցին պարսաւանքի քուէ առաջարկել Սալլաքըրիի արտաքին քաղաքականութեան դէմ, Երեսփոխոյրը բացուելուն պէս:

Սպաները եւ յուսները որ անգլիացի լրագր վերջապէս վառաւոր դաս մը առնէ արեւելեան խնդրին մէջ իր բռնած անօրէն, սկեպտիկ ու երկչոտ քաղաքականութեան համար:

ՏՐՆԻ ՔՕՇԷՆ

Ֆրանսայի Երեսփոխոյր Ժողովի փետր. 5 ի նիստին մէջ, Պ. Տրենի Քօշէն, հանրածանօթ հայասեր երեսփոխանը, Թուրք եւ Հելլէն պատերազմին պատմութիւնը ընելով, պարտաւեր է դիւանագիտութեան գործը. իբրեւ պատասխան ըսուեր է իրեն թէ Ֆրանսայի բռնած ըրթացքը առաջին առաւ ընդհանուր շփոթութեան մը:

Պ Ա Յ Մ Ա Ն Ք ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Խմբագրութիւնս փափաքելով թերթս դիւրամատչելի ընծայել, որոշած է Շարժուել արտասահմանի Հայ մամուլին ամենեւն աճանք ընել, շարքը 2 թերթի համար տարեկան միայն 10 Քր. նշանակելով Պոլսոյ համար եւ արտասահմանի համար բոսնի ծախսով 12 Քրանկ: Բաժանորդագրելու կ'Անիի: Մեր առաջին երեք թերթերը պիտի զրկենք իբրեւ նմուշ անխտիր ամէն ծանօթ անձերու, խնդրելով որ յօժարին կարուկ կերպով կամ բաժանորդ գրուել պայմաններուն համար կերպելով եւ կամ մեր թիւերը ետ զրկեն մեզ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

